# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/1069 «27» 08 2021 թ.

Ձեր

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

### Պայմանագիրը ամբողջական միակողմանի լուծելու մասին

08.12.2020 թվականին ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ստորաբաժանումներում գրասենյակային մաքրման ծառայություններ իրականացնելու նպատակով ՀՀ ոստիկանության և «ԷՅ ԷՅ ՋԻ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2 ծածկագրով պայմանագիր: Վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ծառայությունները մատուցել սույն թվականի հունվարի 8-ից: Սույն թվականի հուլիս ամսվա ընթացքում ծառայությունները ՃՈ ստորաբաժանումներում չեն կատարվել համապատասխան տեխնիկական բնութագրին: 01.08.2021թվականի դրությամբ համաձայն ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված զեկուցագրերի թվով 4 ստորաբաժանումներում «Էյ Էյ Ջի Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից մաքրման աշխատանքներ չեն իրականացվում, ուստի ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից մաքրման ծառայությունների անհամապատասխանությունների վերաբերյալ ՃՈ են ներկայացվել զեկուցագրեր, տեղեկանքներ և բացասական եզրակացություններ համապատասխան չափաբաժինների վերաբերյալ: Հարկ է նշել, որ նշված պայմանագիրը լուծվում է ամբողջությամբ, քանի որ սույն թվականի հունիսի 7-ին համապատասխան զեկուցագրով,բացասական եզրակացություններով և զեկուցագրերի հիմք ընդունելով արդեն իսկ լուծվել է վերը նշված պայմանագրի թվով 5 չափաբաժիններով ստանձնված պարտականությունների մի մասը:

Պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայությունները կազմակերպության կողմից չեն կատարվել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, 2.1.3 ա) և բ) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 1-ին, 6-րդ, 8-րդ, և 11-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով պայմանագրի 5-րդ ենթակետի 1,2,3 պարբերությունների պահանջները՝ ՀՀ ոստիկանությունը 2021 թվականի օգոստոսի 24-ից միակողմանի լուծում է 2020 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2 ծածկագրով պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունից կգանձվի որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները, համապատասխանաբար 3 465 000 (երեք միլիոն չորս հարյուր [illegible] հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով:

Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Կոնվերսբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայանգրի տեսքով որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 3 465 000 (երեք միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար) և 346 500 (երեք հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900008000698 և N 900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

**Ոստիկանության**
**գնդապետ** **Կ.Ցուցույան**

Կատարող՝ Վ.Մաշկովսկայա